



## 73. ԱԽՊԵՐՈՒԹՈՒՆ

Հըլնում են, չեն հըլնում, իրեք ախազեր են հըլնում: Գալում ա ըստոնց խոր մեռնելու ժամանակը: Խերը տղերքին կանչում ա ու ասում, որ հիրանցից մեկը բղի տունը կառավարա, մե տանը իրեք կառավարող չի հընի, պտի մնացած էրկուար մեկի խոսկը լսան, ենթարկվեն ընդրան, ունեցած-չունեցածը քամուն չըտան, աբրուստի վրեն աբրուստ հավլցուն: Թե էտ բանն անել չեն կանա, թո բաժնվեն, որն իմալ կանա, թո աբրի: Բայց ասավ, որ չըրաժանվեն:

—Բաժանվելուն որ խասավ, տղե՛րք ջան,—ասավ խերը, աբրուստը ձեռից կէթա: Մե մարթը չի կանա վարնուցանքն անա, տավար-ոխճարին ուշադրութուն դարցնա, հազար գործ կա, հազար բան: Մնացածը ձեր գործն ա, տղե՛րք,—ասավ խերը, արեք ձեզի տվեց ու գնաց էն աշխարքը:

Տղերքը խելոք տղերը ին, խորը շատ լավ, պատվով թաղին, 40 օր սուք պախին, 40 օրից ետո թրաչվան ու հելան հիրանց բան ու գործին:

Մե օր մեծ ախազերն հիրա միշնեկ ախազորն ասավ.—Համբո՛ ջան, դու հուսումով մարթ ես, քանի տարի խալֆա Սեփոյ մոտը կարթացեր ես, քերեկան ես կարթում, էնօր էլ ժամը Դանելի կարթացիր, բոլորն են զարմացե, արի դու մեր տունը կառավարա, ես ու պստի ախազերս քեզի կըլսանք, մեր խոր ոսիաթը կըկատարենք:

Միշնեկ ախազերն ասավ.—Մեր մեծ ախազերը դու ես: Հիմի դու մեր էրկուսի խըմար խեր էլ ես, ախազեր էլ ես, մեր տունը դու բղի կառավարես, ինչ անենք, թե ես խալֆի մոտ մե էրկու այիբ-բեն եմ սովրե: Քո զանքը վարուցանքով ա հընցե, խողի լիզուն դու ես խասկնում, ոնչ թե մենք, դու բղի կառավարես: Որն ա տեսե՞ պստիկը տուն կառավարա, ջոչ ախազերը ենթարկվի պստիկին: Ամեն ժամանակ էլ ջոչ տղեն ա խոր փոխարեն դարցե տան մեծը, էտ օրենքը հո մենք չե՞նք փոխի: Մեռնեմ օրեքն դրողին, լավ օրենք ա:

Դառնալով պստի ախազորն ասավ.—Արքո՛ ջան, քո խոսկն էլ ասա՞:

Սրբոն էլ ասավ, որ հինքը էրկուսին էլ կենթարկվի, հըմա տու-  
նը բղի կառավարա ապերը (մեծը):

—Հո աշխարքով մեկ խայտառակ չե՞նք հըլնի, պապական  
օրենքը փոխի, —վերջացրեց Սրբոն:

Էլի մեծ ախապերը հրաժարվավ, որ հիրա մեծության իրավունքը  
չի ուզում օքտագործել:

Նատ որ վիճեցին, դիմեցին հիրանց տան մեծ քավորին, որը հի-  
րանց խոր հասակին մարթ էր:

—Ծնորակալ եմ, սանիկնե՛ր, որ իմ խորհրժին եք դիմե, —ասավ  
քավոր կրրոն, —ես իմ կարծիքը կասեմ:

Ամեն մեկտ թո իրեք օր տունը կառավարա, իրեք օրից ետո կը-  
գաք իմ մոտը, կասեք՝ ինչ եք արե, ետո էլ ես իմ կարծիքը կասեմ:  
Համաձայն եք:

—Համաձայն ենք, —ասին ախապերները:

—Դե որ համաձայն եք, գացե՛ք, հառաջի իրեք օրը թո կառա-  
վարա ձեր մեծ ախապերը: Իրեք օրը որ վերջանա, հիրկուն կըգաք  
մոտս:

Ախապերները գացին տուն:

Հիրկուն մեծ ախապերն հավաքեց ախապերներին, մշակներին ու  
ասավ. —Հէքուց կէթաք սարից բոլոր ոխճարները կըբերեք, մոր-  
թենք, ծախսենք, միսը թանգ ա: Չորանները թո ոխճարը բերեն,  
դուք էլ դանակները սրեք, խառսներն էլ թո ամանները պաղրաս-  
տեն, սելերն էլ սարքեք, որ տանենք քաղաք:

Չորաններից մեկն ասավ. —Ամառ ա, մորթենք միսը կըփճանա,  
ոտի վրա տանենք քաղաք, մորթենք ու թազա-թազա ծախսենք:

Մեծ ախապերը ձեն չըհանեց, հըմա էրկու ախապերը չորանի վրեն  
նեղացան. —Դու մեր ախապոր խոսկին հընչի՞ ես խոսկ բերում,  
կըփճանա, թո փճանա, էլ չըխոսաս, խելք չըսովրցուս:

Մյուս օրը կեսօրին ոխճարը բերին գեղը:

—Կթե՛ք, —ասավ մեծ ախապերը, —Հետո մորթենք:

Ոխճարը կթին, լցին դազանները:

—Լա՛վ, էլ աման չըմնաց, կաթով լինքն են, արեք մածուն ու  
պանիր, կարաք, հէքուց կըմորթենք:

Չորանին ասին, որ ոխճարը տանա սարը, եփ հիմաց տան, էն  
ժամանակ բերա: Չորանը ոխճարն առավ, գնաց սարը:

Մեծ ախապերն ասավ. —Բերեք առաջ տափարը մորթենք, տա-  
փարի միսն հավելի թանգ ա: Կրբո՛, Սրբո՛, գացե՛ք, նախսրից տա-  
փարը ջոկեք բերե՛ք:

Ախապերներն անխոս գացին, տափարը բերին:

Որ բերին, մեծն ասավ.—Միտքս փոխեցի: Քանի հըլա եզները չենք լծել, էթանք մեր կանանչ հարտերը վարենք, ետո եզները մորթենք, ոյսարները մորթենք, էթանք քաղաք, թե չէ մեր էսքան վարնուցանքը վի՞րը թողենք:

Գութանները լծեցին, գացին հարտերի գլխին կայնան:

—Ե՛տ դարցեք, —ասավ մեծ ախպերը, —չենք վարի, թո մնան, խասնեն, ետո պաժառ տանք վառենք, էլ հնչի՞ չարշարվենք:

Էսքան բան անելուց ետո իրեք օրն հընցավ:

Ախպերներն հիրկուն էկան քավորի մոտը, ոնց որ հելեր էր, էնենց ասին:

—Դո՞ւք ինչ կարծիքի եք, —ասավ քավոր Սրբոյին ու Կրբոյին:

—Մեր ախպերն ա, ինչ որ ասում ա, դուզ ա ասում:

—Զէ՛, տղե՛րք ջան, դուզ չի ասում: Կանանչ հարտը չեն վարի, էտքան տավարն ու ոխճարը ոամբարը մորթելու իրավունք չունի: Զեր մեծ ախպերը ձեզի ա փորցե, տենա ի՞նչ կասեք: Դուք էլ աբրեք, որ ձեն չեք արել: Էսօրվանից ձեր տունը թո կառավարա ձեր մեծ ախպերը, տենում եմ, որ ձեր ախպերութունն իսկական ախպերութուն ա, ձեր խոսկը մեկ ա:

Ըտուց ետո մեծ ախպերն ասավ.—Մեր բաղի մեջը ոսկի կա: Էկեք էնենց փորենք, որ ծառներին ու վազներին վնաս չըտանք, Համ էլ ոսկին զթնենք:

Բախերը վերցին գացին: Բաղ մե քանի տարի չին փորե: Փորեին, ոսկի չըկար, հըմա էտ տարին բաղը զարմանալի բերք տվեց: Պտուղը ծախին, արին ոսկի փող, դրին տունը:

—Այ թե հուր ա ոսկին, —ասավ մեծ ախպերը, —ոսկին աշխատանքի մեջ ա: Ինչքան շատ աշխատեք, էնքան լավ կարրեք:

Մե օր էլ կայնան չայի կրաղը, մեծ ախպերն ասավ.—Ափսոս որ էս ցորենը ջուրը տանում ա:

—Հո՞ւր ա ցորեն, ապե՛ր, —ասին ախպերները:

—Ո՞սց չեք տենում, —զարմացավ մեծ ախպերը:

—Գնացե՛ք բախերը, քլունգները բերե՛ք, մե քանի մարթ էլ մշակ բերեք, է, գետի ջուրը փոխենք մե յանի, սարաթը դնենք հառեցը, թո ջուրը ցորենը բերա, լցա սարաթը:

Ախպերները սուսուփուս ենթարկվան: Էստեղ մե ջաղաչ շինեին: Նոր միայն ախպերները խասկցան հիրանց ախպոր միտքը: Ջուրն էթում էր, ցորենը գալում, լցվում ամբարները:

Էս գեղում մե չար, հարուստ մարթ կար, մտածեց ու հինքն հիրան ասավ. «Լա՞վ, դուք ընձնից հարո՞ւստ դառնաք, տենանք՝ վիր մերը տղա կըբերա, ընձի «Դունո աղա» են ասում: Հիմի կըտենանք Դոնո աղի ուժը»:

Դոնո աղեն մե քանի սութ վկա բռնեց, թե էս իրեք ախպերն էլ թաքավորին քոֆեցին, հիրանք էլ լսացին: Դոնո աղեն գնաց թաքավորի պալատը, ներկայացավ պիսրներին ու ասավ, որ հինքը ուզում ա էթա թաքավորի մոտը, գախտնի բան ունի ասելու:

Թողեցին, մտավ թաքավորի դիվանիսանեն, գլոխ տվեց, ձեռները դրեց դոշին, կայնավ.—Ասա՛, ի՞նչ ունես ասելու, ի՞նչ գախտնիք ա:

—Թաքավո՛րն աբրած կենա, մեր գեղն իրեք ախպեր կան՝ Սարոն, Սրբոն ու Կրբոն: Էս մարթիք շատ հարուստ են, արուն-դարունի տեր, հըմա էլի քեզանից դժոռն են, քեզի քոփում են: Թաքավո՛րն աբրած կենա, չըկարցա համփերել, սիրտս չըտարավ, էկա, որ քեզի ասեմ:

—Ի՞նչ էր քոփում, —ասավ թաքավորը:

—Լիզուս չի պտտում, թաքավո՛րն աբրած կենա:

—Ասա՛, ասա՛, կըպտտվի, քո լիզուն էրևում ա, որ պտտվող լիզու ա:

Էս մարթը չըխսակցավ թաքավորի ասածի միտքը, չըխսակցավ, որ թաքավորն ասում ա, թե դու բամբասող ես, իսկ բամբասողի լիզուն լավ կըպտտա:

—Թաքավո՛ր, ըտոնց մեծ ախպերը քոփեց քո խորը, մորը:

Էլի էնենց բան ասավ, որ չեմ կանա ասի:

Թաքավորը ծափ տվեց, մտան դրանիկները: Թաքավորն էս մարթուն ասավ՝ վկա ունե՞ս:

—Կա, թաքավո՛ր, բա չըկա՞՝, իրեք վկա ունեմ:

Թաքավորը կարքադրեց զրել վկաների և մեղադրվողների ազգանունները, շուտ ձիավոր հղրկել էտ գեղը և կանչել դրանց, իսկ էս մարթին չըթողել ոնչ մե տեղ էթա, չանքի նրանք գան:

Թաքավորի հրաման էր, ո՞րը կանա չըկատարա, գլոխը կըթըոցնեն առանց դատի ու դատաստանի: Զէր քաշե էրկու սհաթ, բոլորին բերին:

Ինչ էս ախպերներն են, բանից բեխաբար, մեամիտ, դողում են, հիրար են խառցնում.—Հո մե վատ բան չե՞ք արե, որ խաբարը թաքավորին ա խասե, ասե՛ք, հիմանանք, մտածենք, թե ինչ անենք, —ախպերներին էր խառցում մեծը:

—Ապերո՛, մենք ոնչ մե վատ բան չենք արե, —ասին միշնեկ ու պստի ախպերը:

—Ես էլ չեմ արե, —ասավ մեծը, —բա հընչի՞ ա կանչե:

Թաքավորի դիվանիսանի դուռը բացվավ: Կանչին Դոնո աղին ու Սարոյին:

**Թաքավորն ասավ.—Դոնո՛ աղա, պատմա՛ տեսանք, ի՞նչ էր ասում Սարոն:**

Դոնո աղեն սկսեց կրկնել ավելի խիստ: **Թաքավորն աշկի տակով հիշկում էր Սարոյին: Սարոն մացեր ա զարմացուկ: Եփ Դոնո աղեն վերչացուց, թաքավորը դարցավ Սարոյին՝ խոսա՛:**

—Ի՞նչ խոսամ, թաքավո՛ր, խոսալու բան չունեմ, ես՝ հուր, թաքավորն՝ հուր: Ճիշտ ա, թաքավորի հետևից թաքավորի խորը քոփում են, Հըմա թաքավորը չի լսում: Քոփում ա էն մարթը, որը մատնում ա: Հիմի էս մարթը մատնիչ ա, դու լսացիր, թաքավո՛ր, բայց որ ես չեմ քոփե, էտի Աստված ա հիմանում:

Կանչեցին վկաներից մեկին: Նա հաստատեց Դոնո աղայի ասածը:

—Օրվա ո՞ր ժամին հայհոյեց, քոփեց, վկա՛:

—Հառավոտ էր՝ բարի լուսը բացվելուն: Ես, Դոնո աղեն ու էն էրկու վկերը կայսե խոսում ինք, մեկ էլ տեսանք՝ էս իրեք ախապերը քեզի քոփելով հիրանց բակից դուս էկան, որ մեզի տեսան, ձենները կորին ու գացին:

Մյուս վկան էլ էկավ, Դոնո աղայի խոսկերը հաստատեց.—Օրվա ո՞ր ժամին, ո՞րտեղ հայհոյեց:

—Հենց գեղի մեջտեղը, շատ մարթ կար, օրը կեսօրին, մենք հերեսներս թեքինք, որ ըտոնց գարշելի հերեսները չըտենանք: Քոփին ու թողին գացին:

Երրորդ վկային կանչին: Սա էլ հաստատեց:

—Որտե՞ղ, օրվա ո՞ր ժամին,—խառցրեց թաքավորը:

Զայի կրաղը: Հիրկվա յան էր, գործից ին գալում, չեմ հիմանում Հընչի նաղացած ին, քեզի ին քոփում:

**Թաքավորն ասավ.—Դոնո՛ աղա, տեսա՞ր՝ մեկն ասում ա հառավոտը հիրանց բակում, մեկն ասում ա՝ կեսօրին գեղի մեջը, մեկն ասում ա՝ հիրկուն չայի կրաղը: Էս գործը կազմակերպված ա: Էն ախապերներին խարցնելու կարիք չըկա:**

Ծափ տվեց: Դրանիկներն էկան՝ ըստե կանչե՛ք ջալլաթին: Ջալլաթը կացինը ձեռին ներս մտավ:

—Տար էս չորսին էլ գլոխները կորիա՛:

Էն եմ ասում, որ, տղե՛րք ջան, ընդոնց գլխները կորին, էս իրեք ախապերն էկան հիրանց տունը:

Արթարութունը լուսում ա, Հըմա չի կորում, մե օր էրկում ա: